ու ավերածությունների պատճառ դարձած ահավոր սողանքների դադարումը բացատրվում-պատճառաբանվում է Աստծո ողորմածությամբ, և որպես ապացույց բերվում է տեղի միաբաններից մեկին երևացած տեսիլը. «...տեսանէի զոմն չքնաղատես, մեծաշուք, պայծառ զգեստուք հեծեալ յըսպիտակ երիվար, և կայր ի վերայ տանեաց եկեղեցւոյն, որում առաջի ժողովեալ եղբարցն, պատմէին զանցս ահագին վշտացն, իսկ երևեալ փառաւոր այրն զնոյն երկրորդեալ խօսէր ընդ եղբարցն: Որ և ի կարգս խօսից իւրոց ասաց այրն փառաւոր. «Եւ ես վասն այդմ իրաց կամ և հոգամ, որոյ սակս սակաւ մի ցաւեաց ծունկս իմ, զի զոտս իմ եղեալ ի դէմ երեսաց քարանձաւիդ զդէմ կալեալ ունէի լերինդ, զի մի փլուզեալ ծածկեսցէ զանապատս եղբայրանոց. և դուք մի ծուլանայք ի գործոց առաքինութեան, և հանապազ գոհութեամբ փառաւորեցեք զՏեր Աստուած՝ որ փրկեաց զձեզ. և առ յապայն ևս փրկեսցէ ողորմութեամբն իւրով. որում փառք յաւիտեանս ամէն» (էջ 225–226):

Տեսիլների հատկականություններով են առանձնանում նաև հրաշքների պատմությունները, որոնք նույնպես մեծ մասամբ հանդիպում են վկայաբանությունների ու վարքերի ժանրային հատույթում: Այսուհանդերձ, Դավրիժեցու պատմագրքում առկա է նաև որպես հատուկ գլուխ առանձնացված մի հրաշքի պատմություն: Խոսքը վերաբերում է «Յաղագս սքանչելեացն Աստուծոյ, որ եղև ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուան իւրոյ ուրացաւ» վերնագրով ԽԹ գլխին: Դա պատմություն է Ղարաչորակ անունով մի հայի մասին, ով մահվան ժամին հրաժարվում է հաղորդություն ընդունել, ավելին՝ վերջին պահին մոլլա և մուղրի է կանչում ու փոխում կրոնը: Այդ պատճառով նա գերեզմանում հանգիստ չի ննջում, այլ՝ «ելեալ էր ի վիէն՝ յորում թաղեալն էր, մերկ և խայտառակ, և գարշադէմ, և այլագունակ, իբրև զշուն կատաղի» (էջ 422), և սարսափ առաջացնում բնակչության շրջանում: Սարսափահար մարդիկ նրա դիակը, գլուխը կտրելուց հետո, տանում-կորցնում են: